ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Գ Լ Ո Ւ Խ 14[1]

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հոդված 206.15. Փաստաթղթեր, տեղեկություններ և այլ նյութեր տրամադրելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ կատարման ժամկետները խախտելը

1. Փաստաթղթեր, տեղեկություններ և այլ նյութեր տրամադրելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հիսունապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Հոդված 223. Վարչական դատարանները
(վերնագիրը փոփ. 07.02.12 ՀՕ-2-Ն)

Վարչական դատարանները քննում են՝

1) սույն օրենսգրքի 40[1] -40[4], 40.6 - 40.14, 97[2], 97[3], 147, 166[1], 172.3 հոդվածներով, 180[1], 182, 183[1], 189[2] -189[6], 189.9-189.10 հոդվածներով, 198[2] հոդվածի չորրորդ մասով և 206[5], 206[10], 206[11], 206[12], 206[13] հոդվածներով նախատեսված դեպքերում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) հայցադիմումով.

2) սույն օրենսգրքի 170[5], 189[7] հոդվածներով և 198[2] հոդվածի հինգերորդ մասով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով.

3) սույն օրենսգրքի 206[9] հոդվածով նախատեսված դեպքում՝ դատավճռի, վճռի կամ այլ դատական ակտի կատարումն ապահովող պետական մարմնի (պաշտոնատար անձի) հայցադիմումով.

4) սույն օրենսգրքի 206[8] հոդվածով նախատեսված դեպքում՝ մարդու իրավունքների պաշտպանի հայցադիմումով.÷

5) սույն օրենսգրքի 206.15 հոդվածով նախատեսված դեպքում՝ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի հայցադիմումով»:

(223-րդ հոդվածը փոփ 01.07.91, 11.05.92, 02.09.93 ՀՕ-79, 19.05.95 ՀՕ-137, 04.11.96 ՀՕ-85, 03.12.96 ՀՕ-102, 02.12.97 ՀՕ-162, 19.03.99 ՀՕ-287, 10.10.00 ՀՕ-96, 11.09.01 ՀՕ-215, 01.12.03 ՀՕ-47-Ն, 24.03.05 ՀՕ-78-Ն, լրաց. 01.06.06 ՀՕ-115-Ն, 21.02.07 ՀՕ-73-Ն, փոփ. 22.12.10 ՀՕ-10-Ն, խմբ. 08.02.11 ՀՕ-48-Ն, փոփ. 26.05.11 ՀՕ-165-Ն, լրաց. 19.03.12 ՀՕ-34-Ն, փոփ. 07.02.12 ՀՕ-2-Ն, լրաց. 17.05.16 ՀՕ-51-Ն, փոփ., լրաց. 16.12.16 ՀՕ-8-Ն, փոփ. 01.03.17 ՀՕ-45-Ն)

(223-րդ հոդվածը 09.06.17 ՀՕ-106-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի լրացմամբ ուժի մեջ կմտնի 01.01.2018 թ. և 09.06.17 ՀՕ-106-Ն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի լրացմամբ ուժի մեջ կմտնի 10.04.2018 թ.)